

Հայ գրականության մարզային օլիմպիադա

2019-2020 ուստարի

(տևողությունը՝ 120 րոպե)

10-րդ դասարան

1. Ի՞նչ գիտես առակի մասին. Ե՞րբ է ձևավորվել որպես գրական ժանր. ովքե՞ր են հայ առակագրության առաջին մեծերը: Մեկնաբանի՛ր հետևյալ առակները, նշի՛ր հեղինակներին:

Փիղն իր որդուն հանձնեց Պլատոնին՝ իմաստություն ուսանելու: Եվ ուսուցիչը հանձնարարեց աշակերտին չոքել լսարանում, իսկ նա չկարողացավ: Պատվիրեց նաև, որ գլուխը խոնարհի գետնին, այդ ևս չկարողացավ:

Պլատոնը ետ վերադարձրեց նրան հորը և ասաց.

-Վայել է, որ քո որդին թագավորի պալատում լինի՝ միշտ ոտքի կանգնած, և ոչ իմ լսարանում, քանի որ ո՛չ նստել կարող է և ո՛չ գլուխ խոնարհել»:

«Առյուծը, գայլը և աղվեսը եղբայր եղան և որսի էլան և գտան մի խոյ, մի ոչխար, որ է մաքի, և մի գառ: Ճաշի ժամին առյուծն ասաց գայլին, թե բաժանի՛ր մեր մեջ այդ որսը: Եվ գայլն ասաց

-Ո՛վ թագավոր, Աստված արդեն բաժանել է. : Աստված արդեն բաժանել է խոյը՝ քեզ, մաքին՝ ինձ, և գառը՝ աղվեսին:

Եվ առյուծը բարկանալով՝ ապտակ զարկեց գայլի ծնոտին, և դուրս թռան գայլի աչքերը, և նա նստեց և դառն լաց եղավ: Եվ դարձյալ ասաց առյուծն աղվեսին, թե բաժանի՛ր ոչխարները մեր մեջ: Եվ աղվեսն ասաց.

-Ո՛վ թագավոր Աստված արդեն բաժանել է.

-Խոյը քեզ ճաշին, մաքին քեզ՝ հրավերքին, և գառը քեզ՝ ընթիքին:

Եվ առյուծն ասաց.

- Ո՛վ խորամանկ աղվես, քեզ ո՞վ սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել:

Եվ աղվեսն ասաց.

-Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան»:

6 միավոր

2. Ու՞մ շնորհիվ են պահպանվել և մեզ հասել հայոց առասպելներն ու վիպերգերը: Նշի՛ր առասպելի և վիպերգի տարբերությունը: Մեկնաբանի՛ր «Հայկ և Բել» վիպերգը: Բնութագրի՛ր Հայկին ըստ Խորենացու: Նշի՛ր այս վիպերգի գրական արձագանքները (բանաստեղծություն, պոեմ, ուսումնասիրություն և այլն):

4 միավոր

3. Գրիգոր Նարեկացին և Հայաստանի վերածնունդը: «Մատյան ողբերգության» պոեմի քո՛ ընկալումը: Պարույր Սևակի գնահատականը «Մատյանին»: Ի՞նչ շրջասույթներ գիտես Նարեկացու մասին: Կարո՞ղ ես ինքդ գրել որևէ շրջասույթ:

5 միավոր

4. Ո՞վ է Սայաթ-Նովան: Գրի՛ր հայ մեծերի գնահատականներից (առնվազն՝ երկուսը): Ո՞վ է Սայաթ-Նովայի առաջին կենսագիրն ու մեկնաբանը: Քո սիրած տաղից գրի՛ր 1-2 քառատող և վերլուծի՛ր:

5 միավոր

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ Ս. Աբազյան